խղճալի դրութեան մէջ գտնուող ժողովրդոց փոխանակ մի որ և իցէ տեղից, մի անակնունելի լուսաւորեալ ազգասէրներ դուրս գալով՝ ի սէր ազգութեան տարածէ նոցա մէջ հայութեան ոգի և հայ լեզու. ընդհակառակն այսպիսի տեղերից գիտնականները լցնելու լոյս ունենալով կեղծեալ ազգասէր և սրտացաւ ուսումնականներ դուրս եկած են, որոնք աչքը ու ղիկլու տեղ՝ գլուխն էլ կորել են. բայց ներկայ տարիներիս՝ կարգուելով գործակատար և միանգամայն տեսուչ երկսեռ ուսումնարանաց տեղւոյս բարեկրօն Գէորգ աւագ քահանայն Տէր Սարգսեանց, հին Հոգաբարձուաց արձակուելէն զկնի՝ սկսեց նա մեծ ջանքով նոր և ընտրեալ Հոգաբարձուք մեծաւ յորդորմամբ նոցա տեղ հաստատել, որովհետև ուսումնարանք ընկած լինելով ի ներքոյ (700 րուբլի) պարտուց՝ ոչ ոք չէին իշխել հոգաբարձուական պաշտօնին. կարգաւորեց ուսուցչաց ռոճիկները և յընթացս երկուց ամաց վճարեց վերոյիշեալ պարտքը, և ի ներկայիս գտնուած գումարն էլ յայլ և այլ աղբիւրներէ կաշխատի շահացնել, ինչպէս յանցեալումս մի բարեպաշտուհի վրացի տիկնոջ բարեպաշտակ յառաջարկութիւն արեց, և որ նորա առաջարկութեան համաձայն նուիրեց յօգուտ երկսեռ ուսումնարանաց 100 ռուբլի, որոյ փոխարէն 50 վերստ ճանապարհաւ նորա հայազգի կողակցոյ մարմինը հանդէսով բերեց և թաղեց մերձ գերեզմանատան եկեղեցւոյն տեղւոյս, և հաւաստի տեղեկանալով որ հայերէն խօսակցութիւնը ըստ մեծի մասին և միանգամայն կարելի է իգական սեռի ձեռօք տարածել հասարակութեան մէջ, վասն որոյ ճիգն թափեց որ օրիորդաց ուսումնարանը բարեկարգ և անթերի ընթացք ունենայ, որոյ վասն մեծաւ թախանձանօք հրաւիրեց պարկեշտուհի Տասիայ Մկրտումեանցը՝ վարժապետուհի և հոգատար ամենայն հարկաւորութեանց, վասն զի օրիորդք վճարելով ամսական 2 ռուբլի՝ կճաշեն ուսումնարանի սեղանատան, յետ ճաշելոյն կպարապին ձեռագործութեամբ մինչ երեկոյեան 6 ժամը. ապա կարձակուին գնալ իւրեանց տուն. աշակերտուհիք բաւականաչափ հայերէն խօսելու և կարդալու մէջ յառաջացած են, որոց միջից աշակերտուհի Դարեջան Մկրտումեանցը մաքուր և հայացի արտաբերութեամբ կարդաց զտոկի շաբաթ երեկոյեան «Դանիէլին»՝ որ մեծապէս զարմացրեց ժողովրդոց բազմութիւնը, որոց շատերը խրախուսուելով տուին իրանց աղջկունքը և տղայքը Ուսումնարան, և սոյնգունակ նոցին ընթացքը յառաջ գնալով հարցաքննութիւն սկսուեց Յունիսի 25 ին, նախ սուրբ Վարդանեան ուսումնարանին, ուր ժողովուած էին յիսուն անձինք հրաւիրեալ իշխանք. աշակերտք համաձայն աղեւսակին գերազանց գըտան, և պարգեւաբաշխութեամբ արձակեցան. իսկ 27 ին սկսուեց հարցաքննութիւն սուրբ Գայիանեան Ուսումնարանին, ուր ժողովուած էին 100 էն աւել իշխանուհի տիկնայք, նոյնպէս համաձայն աղեւսակին գերազանց գտան. օրիորդ Դարեջան Մկրտումեանցը կարդաց հետեւեալ ճառը, և յետ որոյ խօսեց տէր Գէորգ Աւագ քահանայն թէ՝ «Ուրախ եմ որ այսօր համքաղաքացեացս հետ տեսի ուսումնարանացս յառաջադիմութիւնը, վիճակաւոր Առաջնորդը միշտ ինձ կը կրկնէր, թէ, որովհետև մեր Վեհափառ Հայրապետի միակ ցանկութիւնն է բոլոր վիճակաց ուսումնարաններին յառաջադիմութիւնը, վասն որոյ և ես կցանկամ՝ իմ վիճակիս մէջ գտնուած ուսումնարանք բարեկարգ ընթացք ունենան. ահա և սորանով կատարեցինք այսօր և Մեր ուսումնասէր մեծիմաստ Հօր ցանկութիւնը», ևլն. ապա օրիորդաց ձեռագործութիւնք յօգուտ ուսումնարանաց տեղւոյս ստորագրութեամբ իշխանուհեաց վիճակարկութիւն եղաւ, և պարգեւաբաշխութեամբ աշակերտուհիք ևլն արձակեցան ։

ԳՐԻԳՈՐ Դ. Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆՑ.

Ամսագրոյս թղթից անձկութիւնն չներեցին ցուցակները և ճառը հրատարակելոյ:

## ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ

### Խօճաճրեա–Ըեան Արարատ ամսագրոյ.

Մեր լուսաւորեալ և քաղաքակիրթ եղբայրներէն շատեր կվկայեն, որ ներկայ ոսկեղէն իննե-տասներորդ դարուս մէջ աշխարհիս ղանազան ան-

կիւններում՝ տակաւին կնշմարուին հինօրեայ մնացած քանի մի նախապաշարմունքներ մանաւանդ գիւղական կողմը. վայրենաբարոյ և անկիրթ հասարակութեան մէջ: Ահաւասիկ խօսքս ապացուցանելու համար արժան կդատիմ Վրաստանի մէջ եղած նախապաշարմունքներէն մի քանիսը նկարագրել, զոր օրինակ՝ Ննջեցեալը տանէն դուրս բերելու ժամանակը դռները կփակեն, ներսից դագաղը երեք անգամ՝ փակած դռներին կզարնեն, և դագաղ դրուած տեղ տանը մեծ քարը կդնեն. Ննջեցեալը գերեզմանատուն տանելու ժամանակը քահանայք հետ պիտի չնային, հացկերոյթէն զկնի սգաւորին պիտի չյայտնել շնորհակալութիւն և մխիթարութիւնը, ըստ նոցա կարծեաց՝ իբր թէ այլ ևս ոչ ոք չի մեռնիլ այն տան մէջ: Բաց յայսմանէ գիւղերում մատաղ պատրաստելու ժամանակը առանձին Եղիայ մարգարէի անունով այծ մի կմորթեն. որոյ գլուխ և ոտները արտերի մէջ կթաղեն, իբր թէ մարգարէն իրենց երկիրը կարկտէն կպաշտպանէ և այլն. Մեր եկեղեցականք որչափ որ կաշխատին նոցա իրական պարտք լցուցանելու համար ժողովրդականներէն հալածել տգիտութեան խաւարը և բնաջինջ առնել այսպիսի նախապաշարմունքները*), այնչափ աւելի կծաւալի կախարդներին, վհուկներին և հարցուկների շնորհիւ, որոնք իրենց անձնական շահու համար ոչ միայն կմոլորեցնեն պարզամիտ ժողովուրդը, և նրանց մտաւոր կուրութեան աւելի կլինին, այլ և ծանր պարտքի տակ կենթարկեն, վասն զի ժողովրդականք տան մէջ որ և իցէ հիւանդութիւն պատահելու ժամանակը՝ փոխանակ բժիշկներին դիմելու**), և ցաւոց դարման գտնելու, գիւղէ ի գիւղ թափառելով կդիմեն ուղղակի հարցուկներին իմանալու համար թէ՝ իրենց հիւանդ ո՞ր ուխտատեղին է հիւանդացած. Նոքա ևս կսկսին կերպարանքը խոժոռել, լաց և աղաղակ բարձրացնել, ձեռներ և ոտները խաղացնելով թաւալ գլոր խաղալ, և ապա իբր սուրբ և ընտիր պաշտօնեայ ամէն կսկսի նրանց հետ ինքնահնար սուտ գուշակութիւններով խօսիլ իբր Աստուծոյ և սրբոց կողմէն և զանազան սպառնալիքները կարդալէն զկնի՝ ի վերջոյ կյայտնէ նոցանց թէ՝ «Ձեր հիւանդ այս ինչ ուխտատեղէն է, նա շատ բարկացած է ձեզ վերայ և այլն,,. այլ և այլ ուխտերը գնել տալէն զկնի՝ կպատուիրէ տանել կիսամահ հիւանդը քանի մի օրեայ հեռաւոր ուխտատեղին, զոր ինքն կցուցանէ, ուր որ երբէք չեն գնացել՝ Ողորմելիք հաւատալով այս խաւերանեւի խօսքին պարտք կառնեն, այլ կվարձեն, հիւանդին սպիտակ հագուստները կհագցնեն, և կովերով, եզներով, ոչխարներով և ուրիշ շատ ծախսերով կտանեն ցուցուած ուխտատեղի. Սարսափելի նախապաշարմունք. ամենաթշուառ ժողովուրդ այնչափ համոզուած են հարցուկներէն, որ ստոյգ կը կարծեն թէ՝ որ և իցէ եկեղեցի կամ ուխտատեղին կարող է մարդը հիւանդացնել կամ սպանել, տակաւին չեն զգացած, որ այնչափ ծախսեր ի զուր անցնելով՝ շատ հիւանդներ փոխանակ բժշկութիւնը գտնելու՝ այսպիսի ճանապարհորդութեան մէջ՝ իրենց կեանքը զոհած են հարցուկների բարբանջմունքներով: Սոքա Աստուածային սուրբ գրոց հակառակ լինելով՝ թէ և եկեղեցականք կխրատեն ժողովուրդը՝ որ հեռանան նոցա մօտ երթևեկութենէն և չհաւատան նոցա հոգեկորոյս խաբեբայական խրատներին, բայց դժբախտաբար կլսեն այս աղետալի պատասխանը «դուք կցանկաք, որ մեր հիւանդներ մեռնին, թողէք և ձեզ. արդիւնք բազմացնէք...» Այս նզովեալ շառաւիղներ Վրաստանի մէջ շատ տեղերը երևեցան թէ մարդիկ և թէ կանայք այս ինքն է, Տփխիս և Գօրի քաղաքներում, Ախալքալաք և Նօտէ գիւղերում Վրաց ազգէն, Քախվրէլ, Դարադաջ*), Մեսխե**), և Ջերտ գիւղերում ի մերազնէից և այլն. Այս սատանայի արբանեակներէն անուանի

---

(*) Ոչ իւիք կանհետանայ եթէ ոչ ուսումնարաններով. ուրեմն լաւ կլինի որ ամեն գիւղերում ծխական ուսումնարաններ բացուին, որպէս զի ազգովիք ազատ մնան նախապաշարմունքներէն:

(**) Դժուար. բժիշկներն ևս յանկարծ պարտական են հարցուկների այսպիսի օրինազանց ներգործութեանց փախճան գնել:

(*) Սա իր համոզմամբ թողած է հարցկութեան հաւատալը:

(**) Սա ևս Ախալքալաքու քահանայից յորդորանօք այժմ թողած է հարցկութիւնը:

և երեկոյին կհամարուի Ջերմու հարցուկի, որոյ գիւամոլ գործողութիւններ մի այնպիսի հռչակ հանեցին Արարատի չորս կողմը, մինչ զի նախապաշարեալ ժողովուրդ գրեթէ Սամուէլի, Դանիէլի և ուրիշ սուրբ մարգարէների պէս կպատուեն. ողորմելիք կամենալով իրենց ապագայ կենաց հանգամանքները իմանալ՝ քաղաքներէն և գիւղերէն խուռն բազմութեամբ կդիմեն նորա մօտ տանելով փողերը, խունկ, մոմ, հաց, գինի, օղի, իւղ, պանիր, և ուրիշ շատ ընծաները զետեղելէն զկնի՝ բաժակ գինով և հաց առջև դնելով, խունկ ծխելով և վառած մոմը ձեռքին բռնելով կոկոր հրապարակաւ դիւահարի պէս շարժմունքները ցոյց տալ և սուտ բաները դուշակել, մինչև որ բազմութեան ուշադրութիւնը կգրաւէ և իւր առածներին նրանց հաւատութիւն կտայ։ Մոլոր հայերն կկարծեն թէ՝ Հոգին Սուրբ կթելադրէ նորան, բայց չգիտեն որ նա նիւթական օգտի համար սատանայի գործիք եղած է, և իւր հոգին զոհել է նորան։ Սիրելի ընթերցող, եթէ որ մի օրը կհանդիպիս Ջերմ գիւղը, այն հարցուկի տան առաջ ամեն օրը հաւաքուող մոլոր կուրաց բազմութիւնը կտեսնես, որոնք անձնական գործը թողուցած երկու օր կամ երեք օրը նորա դրան առաջ կդեգերին, կսպասեն որ իրենց ևս հերթ հասնի բան մի իմանալու, կը կարծես թէ՝ այն թշուառականի տուն մի երևելի ուխտատեղի է. որով բաւականին վնաս կկրեն թէ անտեղի գիւղականք և թէ հաւաքուած բազմութիւն. Քրիստոսի Տեառն մերոյ խօսքը յիշելով թէ՝ «մի՛ տայք զսրբութիւն շանց և այլն.» թէև ընդդէմ է վհուկներին և հարցուկներին սուրբ խորհուրդները մատակարարել, բայց մեր եկեղեցականք սորա առաջն առնելու համար առանձին բացայայտ հրահանգ մի չունելով և անբաւականութենէն խորշելով՝ չեն վտանգում, ուրեմն շատ օգտակար կլինի անոնց խղճութեանց վախճան դնելու համար Հոգևոր Իշխանութեան կողմէն առանձին տնօրէնութիւն և հրահանգ *) մի՝ թէ՝ քահանայք ինչպէս պիտի վարուին հարցուկների հետ։

Խմբագրութենէդ կխնդրեմ անկիւն մի շնորհել յօդուածոյս ազգաշահ Արարատ ամսագրոյ էջերում ի լոյս և ի զգուշութիւն մեր սիրելի համազգայնոց։

ՄՈՎՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԾՈՒՂԵԱՆՑ

Ի Գ. Ղարաղաջ.

## ՂԱՐԱՂԱՋ ԳԻՒՂԻ ՎԵՐԱՅ·

Մեր բարեշէն հայրենեաց տարաբաղդ գաւառներէն ամենք զանազան հարուածոց բռնութիւններէն նեղուելով՝ ոչ միայն ցիրուցան եղան օտար աշխարհաց անկիւնները, այլ և բազմադարեան ժամանակներէ ի վեր կորուսին իրենց երկնապարգև ձիրքերը, այս ինքն է՝ ազգային յատկութիւնները և մայրենի լեզուն։ Ի՞նչ կը կարծես յարգոյ ընթերցող, այս թշուառութեանց ի՞նչ էր գլխաւոր շարժառիթ, ո՞չ ապաքէն անկրթութիւն և տգիտութիւն, որոց մահաբեր ներգործութիւնք, եթէ ուշադրութիւնդ կդարձնես, տակաւին տխուր արձագանք կհնչեն պատմութեանց էջերէն։ Մի՞թէ կարող է ազգ և հայրենիք յոյս ունենալ այն անձէն, որոյ ականջաց անծանօթ է իւր ազգային լեզուն, հայրենի սովորութիւն և բնաւորութիւն. կարո՞ղ է արդեօք այնպիսին ազգի ցաւոյն ցաւակից լինել և ուրախութեան ուրախակից. ո՛չ բնաւ։ Ահաւասիկ այս ցաւալի վիճակի մէջ են Արարատի մերձակայ հասարակութենէն ամենք մանաւանդ գիւղականք, զոր ցաւօք սրտի կնկարագրեմ։ Արդեօք ո՞վ ազգասէր անձն, տեսնելով նոցա այսպիսի դրութիւնը, պիտի չցաւի և համակրութիւնը ցոյց չտայ։ Նա մտածելով որ մարդս ստեղծուած չէ աշխարհիս վերայ միայն իւր նիւթական շահուն համար ծառայելու, այլ նորա սրբազան պարտքն է նախ՝ հատուցանել իւր ծառայութիւն Աստուծոյ, երկրորդ՝ իւր ազգին և հայրենեաց, ուստի մէկ կողմէն այս նուիրական պարտաւորութիւնս, իսկ միւս կողմէն Գօրւոյ վիճակի Ղարաղաջ գեղջ մերձաւորնոյ հասարակութեան լեզուակորոյս ողորմելի վիճակ և մեր ազգասէր Վեհափառ Հայրապետի

(*) Ի՞նչ հրահանգ պէտք է, մինչդեռ նոյն իսկ քահանայական կոչման պարտաւորութեանն անկ է նաև այսպիսի՝ վնասակար նախապաշարմունքներէն ժողովուրդը ազատել խրատ և համոզկեր քարոզներով, խրատներով, և գրաւոր միջոցներով։

Ծ. Խ.

գերամբարձ կամք և բարեհաճութիւն հարկաւորեցին զիս 1858 թուականին նոյն գիւղի վերայ քահանայ ձեռնադրուելու, ոչ միայն հոգեկան պիտոյքը մատակարարելու նպատակաւ, այլ և ուսումնարանը բանալու, տարաբաղդ և անկիրթ գիւղականաց մէջ մայրենի լեզուն տարածելու և նրանց զաւակները ազգային և բարոյական դաստիարակութեամբ կրթելու՝ ինչպէս որ իրենք խընդրած էին Նորին Վեհափառութենէն։ Այս վեցերորդ տարին կլլայ, որմէ հետէ թէպէտ կը ջանամ Վեհափառ Հայրապետի այս բարենախանձ կամք և նպատակը պահել, բայց դժբաղդաբար տեղւոյս ողորմելի գիւղականք զանազան վտանգների պատճառաւ ամենադառն աղքատութեան մէջ ձնշուած լինելով, առանց դրամական նպաստներին, ափսոս, կը դժուարանամ այս ազգաշահ ձեռնարկութիւնը ի գլուխ հանել։ Երանի թէ մեր սիրելի ազգայինք գթալով այս ուսումնազուրկ և լուսակարօտ գիւղականաց վերայ՝ իւրեանց ճոխութեանց մի մասն սոցա համար ես չխնայէին, որով կարողանայի ամենայն դժուարութեանց յաղթել, ազգային բաղմադարեան կորդացած անդաստանը մշակել, ուսումնարանը շինել և ձրիապէս շարունակելով դասատուութիւնը՝ տարրացնէի սոցա սրտի մէջ Աստուածային կրօնի սկըզբունքները, ազգային լեզուն և եռանդը, որով ըստ ժամանակին ազգի և եկեղեցւոյ պիտանի անդամներ հանդիսանային. սորանից գերազանց բարերարութիւն և առաքինութիւն չեն կարող ընել աշխարհիս վերայ, այսպիսեաւ միայն կարելի է ազգին և հայրենեաց անթիւ բարիքները մատակարարել և զմեզ մեր նախնի ուսումնական շըքեղ և պանծալի վիճակին հասուցանել, մանաւանդ որ իրենց անցաւոր մեծութիւնը Աստուծոյ կամաց համաձայն գործադրելով՝ պիտի լսեն ուրախալի ձայնը թէ՝ «Ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քո», որոց անհամեմատ բարերարութիւնները արքունի շքեղ ծիրանիէն աւելի պիտի փայլեն։ Սիրելի ազգայինք, օրինակ առնենք Էֆէնտեանցի, Գասպարեանցի և ուրիշ սոցա նման ազգապաշտպան անձանց ընաշխարհիկ երախտիք և բարերարութիւնները, որոնք թէ և մեռած են, բայց անմահ են դարուց ի դարս իրենց ազգաշահ գործքերով, վասն զի մեր ազգայնոց զաւակների երջանկութեան համար նախապէս հոգալով՝ և բոլոր վաղանցուկ աշխարհական պերճութեանց նախադասելով ազգային օգուտը՝ ի սէր, ի կրթութիւն և ի դաստիարակութիւն զաւակաց ազգիս, գերազանց կերպով դպրոցներին բարերար գտնուեցան, վասն որոյ և ազգասիրութեան փառաւոր անունով պսակուեցան ազգի մէջ մանաւանդ իրենց հայրենակցաց մէջ. ո՛ր հայրենասէր անձն պիտի չփափագի սոցա նմանելու. Հայաստանի ո՞ր որդին սոցա բարենախանձ օրինակին պիտի չհետևի։ Ի վերջոյ խորադնինին աչօք դիտենք Ամերիկայի բարբարոս և միանգամայն վայրենի գաղթականները, տեսէք ինչպէս նոքա միմեանց համակրութեամբ և աշխատութեամբ սուղ միջոցում դիւրին կերպով ուսման և գիտութեան ասպարիզին մէջ յառաջադիմութիւն գործեցին, որոնք զանազան արհեստներով և բարգաւաճեալ վաճառականութեամբ այժմ բոլոր աշխարհի ուշադրութիւնը կգրաւեն, ո՞ւր մնաց մեր ազգն, որ այսպիսի ձիրքերի մէջ ի սկզբանէ անտի ընդունակութիւն և յարմարութիւնը ցոյց տուած է, պիտի չկարողանա՞յ իւր այս եկամուտ տգիտութիւնը և թշուառութիւնները բառնալ, մանաւանդ որ ժամանակս իրեն կօգնէ, վասն զի մեր ազգասէր Վեհափառ Հայրապետի հայրախնամ թևարկութիւն և ուսումնասիրական հոգացողութիւն նորան թիկունք և զօրավիգ են։ Յարգոյ ընթերցող, այս է միայն իմ նախկական պարտաւորութիւն, զանազան դժուարութեանց և զլացաւութեան ենթարկուիլ, ազգի օգտին անձնանուէր լինիլ, հոգալ և այս լիզուազուրկ գիւղականաց մէջ մայրենի լեզուն տարածել են. իսկ ձեռնտուութիւն և համակրութիւն այս ազգօգուտ ամենահարկաւոր ձեռնարկութիւնը ի գլուխ հանելու համար կախուած է մեր սիրելի և ազգասէր բարեպաշտ անձանց կամքէն։

ՄՈՎՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՄԵՋՈՒՐԵԱՆՑ

Ի Գ. Ղ—ր—ղ—լ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.